# ԿԱ ՄԻ ԶՐՈՒՅՑ, ԹԵ...

**ՍՏԵՓԱՆ ԶՈՐՅԱՆ**
**(1890–1967)**

Գրող, արձակագիր, թարգմանիչ Ս. Զորյանը ծնվել է Վանաձորում՝ նահապետական գյուղացու ընտանիքում: Նախնական կրթությունը Ստեփանը ստացել է Զաքար վարժապետի դպրոցում, ապա ընդունվել է ծննդավայրի նորաբաց ուսումնարանը, որն ավարտել է 1904 թ.:

1906 թ. մեկնում է Թիֆլիս՝ Ներսիսյան դպրոց ընդունվելու հույսով: Սակայն նյութական ծանր վիճակը հարկադրում է աշխատանքի անցնել տպարաններից մեկում՝ որպես սրբագրիչ, այնուհետև «Սուրհանդակ» թերթում՝ որպես թարգմանիչ: 1912–1919 թթ. աշխատում է «Մշակի» խմբագրությունում թարգմանիչ: 1919 թ. գրողը գալիս է Երևան:

Հինգ–վեց տարվա ընթացքում լույս են տեսնում գրողի «Ցանկապատ», «Հազարան բլբուլ», «Ծովանը», «Պատերազմ», «Խնձորի այգին» ժողովածուները: Մինչև պատերազմը (1939) գրում է «Մի կյանքի պատմություն» վեպը, պատերազմի տարիներին՝ «Պապ թագավորը», հետպատերազմյան շրջանում՝ «Հայոց բերդը» (1959) և «Վարազդատ» վեպերը: